600.0055.28.02.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվարի 2018 թվականի №55Ա
քաղ. Երևան

«ԼՈՒՍԱԿԵՐՏ ԲԻՈԳԱԶ ՓԼԱՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի №2-2 ձևին համապատասխան՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ներկայացվում է կիսամյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը,

գ) «ԼՈՒՍԱԿԵՐՏ ԲԻՈԳԱԶ ՓԼԱՆԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի 2-րդ կիսամյակի Տեղեկատվությունը մինչև 2018 թվականի հունվարի 25-ը ներկայացնելու փոխարեն Հանձնաժողով է ներկայացրել 2018 թվականի հունվարի 31-ին,

դ) Հանձնաժողովը Ընկերության կողմից Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2018 թվականի փետրվարի 1-ից վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 1-ի №ԱԲ-201Ս գրությամբ,

ե) Ընկերությունը 2018 թվականի փետրվարի 7-ի N07/18 գրությամբ, նշելով որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության ընդունել է խախտման փաստն ու հայցել Հանձնաժողովի ներողամտությունը,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 փետրվարի 2018թ.